

ՊԱՅՄԱՆՔ

արեգակնային և Գրիգորյան 8 ՄԷՃ
Չ Գրիգորյան 10 ՄԷՃ
վերջինս Գրիգորյան 4 ՄԷՃ
Չ Գրիգորյան 5 ՄԷՃ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրկ
յանուցման տողը մէկ անգամի հաւ
ժար 3 դուրուշ, երկու անգամի հաւ
ժար 2 դուրուշ, աւելի անգամներու
հաժար զատ աւելարկութիւն կրկնայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 30 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 7 մայիս

Նախարարաց ոմանց փոխտնտեսի եւս
զրոյց կայ:

Փարիզ 8 մայիս

Ազգային ժողովը բացուեալն պէս
կառավարութիւնը սահմանադրական օ
րէնքներն և մասնայ փայտ արտարատած
օրէնքը պիտի ներկայացնէ:

Վիեննա 8 մայիս

Կայսրը՝ Կրեմսիոսիանական ժողովոյ
ընդունած դաւանական օրէնքները վա
ւերացուց:

Հոգնիւն իշխանը՝ որ փարիզի դես
պան անուանեցաւ, վաղը փարիզ պիտի
երթայ իր պաշտօնն սկսելու:

Փարիզ 8 մայիս

Մարտի 7 մայիս մարտի 7 մայիս
Քաղաքը մտած ատեն չկայէ՛ հանրապե
տութիւն, ազատականութիւնը ընդունեցաւ:
1873 թ. կոմսսար արեւտաւանդէրսին
տնօրէն Պ. Թրոնսէն բանտարկեցաւ:

Մարտի 8 մայիս

Բնդհանրապէս կարծիք կայ հոս թէ
Քարթուսեան թէ՛ քաղաքականութիւն և թէ՛
գիտականութիւն յաղթեալ են և հիմա
մտնը հրատարակուեալ միայն մնացած են:

Սթըն 8 մայիս

Երեսօխոսանական ժողովն սյուրբուծ
ուեցաւ: Նոր ընտրութիւնը յունիս
7ին պիտի կատարուին, և նոր ժողովն
օգոստ. 1ին պիտի դուստարի:

Փարիզ 9 մայիս

Կը հաւատեն թէ Սթընի Գընդա
պետը դատաստանի պիտի ելնարի:
Պէտիյոն Էնտէրնատան կողմէն ը
րած յայտնութիւններէն կը հասկցուի
թէ՛ վերջին իրաւունքը՝ Գաղղիական պատե
րազմին պատճառն իօթէնի կայսրուհին
եղած է: Պանապարթեանք չի տրուած են:
Լոնտրա 9 մայիս

Անդղիա արտատնտեսալ 230 Գաղղիա
այլք մէջերին հանդանակութիւն բացին՝
Պ. Թրոնսէն կոչուեց մը տարու համար,
երբոր Լոնտրա հասնի:

Պէրլին 9 մայիս

Կլեմսի կայսրը Վիսպատէն հասաւ:
Պարսպ մնացած եպիսկոպոսութեանց
վերաբերեալ օրէնքը 93ի դէմ 237 ձայ
նով ընդունեցաւ:

Թէօթէրի հեռագրական գործակա
նութիւնը սուս կը հանէ թայմիլ տուած
այն լուրը թէ խաղիկ թագաւորը Պէր
լին գնացած ժամանակ Պիտարը իշխանը
խրատ տուեր է անոր որ Նիսի և Սափ
այի դաւաճները Գաղղիայէն յետս պա
հանջէ:

Մարտի 9 մայիս

Հնդկաց Պատրիարքը մեռաւ:
Սերբոս մարաշխաւը թեթև կեր
պիւ հիւանդ է:

Լոնտրա 9 մայիս

Լորտերուն խորհրդարանին մէջ Լորտ
Տէրպի հարցման մը պատասխանելով ը
սաւ թէ Սթընստանի նկատմամբ 1872
ին Լորտ Կրանվիլի դրած պաշտօնական
նամակին կատարելապէս հաւանութիւն

կուտայ, և յաւելցուց թէ Ռուսիա հաւ
տարար ողի մը ցոյց տուաւ որ մէկ
վտանգները բոլորովին կը հեռացնէ:

Ռուսիոյ կայսրն երկուշաբթի Վիսպա
տէնէն մեկնելով Անդղիա պիտի գայ:

Բէլժա 9 մայիս

Գանձային՝ յանձնած ողովն Աւստրի
ական փոխանորդութեան սյուրբուծան
նախն մէջ Աւստրիա կամը հարցման մը
պատասխանելով՝ պատերազմի մտաւաւ
վտանգէն մը գոյութիւնը բացարձակա
պէս ժխտեց, և ըսաւ թէ չճանչեր ըր
նաւ կառավարութիւն մը, որ Եւրոպիոյ
խաղաղութիւնն այսօր վրդովելու խոր
հուրդ ունենայ, թէ պէտ և հաւատար
է որ ժողովրդոց ոմանց մէջ կեցած ան
ժըխտելի հակառակութեանց պատճա
ռաւ խաղաղութիւնն երկար ժամանակի
համար տալաշուկալ չլինար նկատուի:
Արտաքին գործոց նախարարն հերքեց այ
նուէտեւ լրագրաց ոմանց խօսքերը, որը
Բեռլինի մէջ եղած տեսակցութեան
տեղիէ՛ Օմանեան կայսրութիւնը բաժն
ներու և Աւստրո-Հունգարիոյ արտաքին
աշխարհագրութեան նոր ուղղութիւն
մը տարու վերաբերեալ կարգադրութիւն
ներ հնարեցին:

Այս բացատրութիւններուն վրայ
յանձնած ողովն արտաքին գործոց նախա
րարութեան հաւելցուց ընդունեց, և
Պապին քով դուստած դեսպանութիւնը
վերցնելու առաջարկութիւնը մերժեց
Աւստրիա կամին յայտարարութեան հա
մեմատ, որ յիշեալ դեսպանութեան պահ
ւելուն հարկը հաստատեց:

Պէրլին 9 մայիս

Զրոյց կայ թէ Քէսթրլինի կոմսը վե
րստին Կ. Պոլսոյ դեսպան պիտի անուա
նի:

Պայօն 9 մայիս

Քարթուսեան մեծ զօրութեամբ նո
րէն Պիլզաօի մերձակները վերադար
ձան: Քոնդա մարաշխաւն յիշեալ քաղա
քին շրջակները կամրայնէ:

Վիեննա 10 մայիս

Գանձային յանձնած ողովն հաւանութիւն
տուաւ Թուրքիոյ Աւստրո-Հունգարական
դաղմակականութեանց մէջ ժառանգու
թեան միօրինակ ձև մը տարու որոշման,
զոր կառավարութիւնն արդէն ընդու
նած է:

Լոնտրա 9 մայիս

Ուսմ. Գոն. 46 1/2
Վոսմ. 4865 67
» 4869 55 1/8
» 4871 64
» 4872 79
Անգլ. Բոն. 93 3/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանին սենեկապետ
Հիւանի պէյ և Հադի պէյ հանուե
ցան իրենց պաշտօնէն:

Բարձր. Բեամիլ փաշան անցեալ
հինգշաբթի օրէն ի վեր Պետական
խորհրդոյ նախագահութեան պաշ
տօնը շարունակել սկսաւ:

Սերվիլի Միլան իշխանը շաբաթ
օրը Պէյքօղի պալատին մէջ մեծ ճաշ
մը տուաւ, որուն ներկայ էին Մեծ
Եւրոպայի, արաբիքի գործոց նա

խարարը, Ռուսիոյ դեսպանը և այլ
քանի մը նախարար:

Կիրակի օրը Ապտուլահման Մեծ.
եղբայրները կանչել տալով իւր լու
սանկար կենդանագիրը հանելաւա
այլ և այլ դիրքերով:

Կէս օրէն ետքը Վահի. Աբրահամ
պէյին այցելութիւն տուաւ և անոր
գեղեցկազարդ պարտէզները պաշ
տեցաւ:

Իրիկունը առեւտրական գործոց
նախարար Վահի. Մահմաւ փաշային
ապարանք ճաշեց:

Կըսուի թէ յառաջիկայ հինգշաբ
թի օրը պիտի մեկնի մայրաքաղաքէս:

Գահութեամբ կը ծանուցանենք
թէ Սերվիլի իշխանին Կ. Պոլսոյ գոր
ծակաւարութեան Գաղղիներէն ընդ
ուի քարտուղար-թարգման Մեծ.
Թ. Թէրլան Էֆէնային և Տաճկերէն
ընդուի քարտուղար Պ. Պոզուսովի Է
ֆէնային երրորդ կարգի և իշխանին
երկրորդ քարտուղար Մ. Պոզուսովի
Էֆէնային չորրորդ կարգի Մեծիտիէ
պատուանշան ստացան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԿԱՄՔ ՈՒՄՈՒՄԻԷ

29 ապրիլ	Երկուշաբթի իրիկուն	51, 43 1/2
30 »	Երեքշաբթի առաւօտ	51.4
	Բացուցաւ	51 8 1/2
	Կէս օր	51 8 1/2
	Կ. Պոլսի 29 ապրիլ	7.40
Սթընի թէ իշխանի բաժինը	Սնդ. իր.	4 5
« Փոխանակութեան »	»	5.20
Կ. Պոլսոյ Պանքային »	»	9.20
Քրէտի Ժէնէրալ »	»	1.20
Քրէտի Օսթրո-Թիւրք	»	3ր. 415
Երկաթուղեաց հին	»	87 50
» նոր	»	337
Փոխ. 4863	»	340
» 4865	»	283
» 4869	»	80
» 4872	»	—
Փոխ. 4873	»	6.60
Թրաքիա	Օսմ. իր	—

ԲՆԹԱՅԻՐ ԴՐԱՄՈՑ

29 ԱՊՐԵԼ

Անգլ. իր	գործոց	409.25
Նախօրէն ուղի	»	87 20
Իմու գրաւ Ռոս	»	89 25
Գըրմից	»	51, 22
Հինգ ֆրանք	»	—
Հինգուց	»	404 40
Պրիմա	»	124

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Երուսաղէմայ Ամենապատիւ Ս.
Պատրիարքն՝ Ամեն. Ներսէս Սրբա
ղանի Պատրիարքական ընտրութիւնն
իւր փոխանորդին քաջած հեռագրէն
իմանալով, երէկ շնորհաւորութեան
հեռագիր զրկեց Ներսէս սրբաղանի:

Սերվիլի իշխանին առաջին պաշ
տօնեայ և արտաքին գործոց նախա
րար Պ. Մարինովիչ երէկ մեր Պա
րիարքարանն եկաւ իշխանին այցե
տունը բերելով:

Ամեն. Ներսէս սրբաղան Պատրի
արքարանը չգնաւ ելլով, Գեր. փո
խանորդ հայրն արժանապէս պա

ՊԱՅՄԱՆՔ

Գուրոս գացած լրագրաց ճան. ու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո
լիս, Վիեննա, Սափայի գրասեն
եակը:
Համար ծախքը չվճարուած նա
մակ չընդունուիր:

ՕՐՈՒՄՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Թ.

Օրուան խնդրոց ամենէն կարեւ
ւորն ու դիմաւորն էր Պատրիարքա
կան ընտրութիւնը: Այդ խնդրը
լուծուեցաւ: Անցեալ ուրախ պարի
26, ընդհանուր ժողովոյ քուէից ա
մենաբացարձակ առաւելութեամբ Ա
մեն. Տ. Ներսէս վարժապետեան արք
եպիսկոպոսը Պատրիարք ընտրուե
ցաւ: Արդէն Ն. Սրբաղանութիւնն այդ
բարձր պաշտօնին ընտրելը ըլլաւ
համար կանխաւ գրաւած էր ամենայն
Հայոց վեհ. կաթողիկոսին բարձր
փառաւորութիւնը, Բ. Գրան նախարա
րաց և աղբիւս երեւելեաց և հասա
րակութեան ալ համարումն ու սէրը:
Կը շնորհաւորենք Ն. Սրբաղանութեան
ընտրութիւնը՝ մատչելով ի համբոյր
Ս. Այոյն, և կարողութիւն կը մաղ
թենք իր նոր մեծ և միանգամայն
փախուկ ու ծանրաբեռն պաշտօնը
յաջողութեամբ և համբերութեամբ
տանելու:

Դարձնելով աչքերին օրուան ու
րիշ խնդրոց վրայ, կը տեսնենք Պէ
շիկի աչու գերեզմանատունն իր տը
խուր կերպարանքով վայելուչ դա
րաստանի մը վիտամ, հաճոյ աչաց
հայելոյ Օդոստ. Սուլթանին և այս
կայսերական հաճութեան և Հայոց
ազգին կամակաւարտութեան միջնորդ
մը՝ փառաւոր և աշխիւ ինչպէս իր
տոհմականութեամբ և անձնական
պէս պէս ձիրքերով, նոյնպէս և ա
ռաւոյժաւորութեամբ, որ 1300 լիրա
կը շնորհէ աղբիւս՝ յիշեալ գերեզմա
նատան և Պատրիարքական ընտրու
թեան ծախուց համար:

Օրուան խնդրները բազմաթիւ
և ստուար ըլլալուն՝ մտադիր ենք
համառօտ անցնիլ վառն զի թէ՛ ման
րամանաբար և արժան եղած խոր
հրդածութեամբ գրեւոր ըլլանք,
ամեն մեկուն համար Մատիսի մէկ
մէկ թերթ գրաւել հարկ կըլլայ:

Ահա երեսօխոսան մը, որ վանան
դայ և Շիրակայ դաւաճները կը
ներկայացնէր Բնդ. ժողովոյ մէջ, Ա.
Էֆէնայի Այլաղեան, կը հրաժարի ե
րեսօխոսանութենէ, նշանաւոր հրա
ժարագրով մը, զոր հրատարակուած
տեղանք Մանդուկի մէջ, հրաժա
րագիր մը, որ հրաժարելոյն անձնա
կան և պաշտօնական արժանիքն և
իրեն պարտականութեանց ծանաչու
մը կը բովանդակէ: Հակիրճ բայց
սրտառուչ ոճով մը ցոյց կուտայ թէ
պարտք և օրէնք ազգային պաշտօ
նէութեանց սրահէն դուրս ելած ըլ
լալով իր խղճին և հասարակաց կարծ
եաց դատաստանին առջի. պատաս
խանատու մնալ չուզեր: Գեռ նրկա
տողութեան հաւանեցաւ Բնդ. ժո
ղովոյ մէջ այդ հրաժարագրը, զոր

ընդունին թէ ոչ, հետքն ու տխրան
անջինջ կը մնայ:

Կան քանի մ'երեսփոխանք ալ,
որոյ արիւթիւնը սխալի է և ան-
զուգական. որք թէպէտ դուրս չեն
ելած Բնդհ. ժողովէն, բայց իրենց
յայտնած կարծիքներն ու ըրած խոս-
քերը բոլորովին զատուած ու զրո-
ւած ճշմարտութիւններ ու իրաւունք-
ներ են և Շիրակ-Վանանդայ երեսփո-
խանին գրածները կը կրկնեն գուցէ
ալ աւելի կորովով, երեսփոխանու-
թեան ամենատարած մեծամասնու-
թեան առջև, և ասոնք են ասակաւք
ընտրեալքը:

Կրօնական ժողովն իր շրջանը կը
լրացնէ ահաւա՛րիկ. բայց իր վերջին
շրջանին ափունքը հասած ատեն՝ ու-
րոշումներ կուտայ օրուան խնդրոց,
որք իր գլուխ գործողը կրնան համար-
ել: Յիշեալ ժողովոյն ատենագիրը
Ս. Հայրը՝ Պալքէսէրու առաջնորդ-
ընտրուելով կը վաւերանայ վարչու-
թեան, և գ. եւ. վիճակը չգնացած,
վիճակին չծանօթացած, չծանալով,
եպիսկոպոս ձեռնադրուելու վկայա-
կան կ'առնայ կրօնական ժողովէն:

Արդարեւ հաւանելի է որ ամեն
առաջնորդներն՝ նախ կեդր. կրօ-
նական ժողովոյ անդամ ընտրուին,
պաշտօն վարեն, եփին ու կրթուին,
և ապա առաջնորդ ընտրուին: Բայց
առանց իւր վիճակն երթալու և ա-
ռաջնորդութեան պաշտօն վարելու՝
եպիսկոպոսութեան վկայական ստա-
նայն ոչ միայն օրինաւորութեան և
Հայաստ. եկեղեցւոյ սահմանաց դէմ
է, այլ և այսուհետեւ պայման մը
կրնայ ըլլալ ամեն նորընտիր առաջ-
նորդաց համար, մինչդեռ գաւա-
ռաց մէջ վարդապետ առաջնորդներ
ունինք, որք երկար տարիներ վի-
ճակներու ծառայած են, բայց տա-
կաւին եպիսկոպոս չեն եղած: Այս և
ընդհանրապէս եպիսկոպոսութեան
խնդրոյն վրայ շատ բաներ կան դըր-
ւելիք, բայց մեք չենք կրնար գրել
առ այժմ:

Կրօնական ժողովը հրաման տուեր
է, կրտսի կարապետ անուն սարկա-
ւադ մը վարդապետ ձեռնադրել
Ղաթա՛լի եկեղեցին. բայց ասոր հա-
ւատալ դժուարին կուգայ մեզ վասն
զի Ս. Երուսաղէմայ Սմեռն. Ս. Պատրի-
արքն այդ անձը սարկաւադութենէ
զադրեցուցած է եղեր: Ուրիշ բան
է, եթէ կրօն. ժողովը Նորին Սբ. Բազմ-
ութեան հետ թղթակցելով ար-
ձակման գիր բերել տուած ըլլայ:
Մեք ծանօթ չըլլալով նորընտիր
անձին և բարոյական արժանեաց,
կամ անոր արդիւններուն ու ճանրը-
ւելուն հանգամանաց, ասկէց աւելի
բան մը չենք կրնար բռնել:

Տիրութեան հրաշքով Մկրտիչ Ե-
պիսկոպոսն՝ առանց հրամանի բազ-
մաթիկ տգէտ անձինք եկեղեցւոյ
պաշտօնակ ձեռնադրած ըլլալով,
կրօն. ժողովն ազդարարութիւն ը-
րած է հեռագրով որ անհրաման
ձեռնադրութիւն չընէ, և Մշոյ Ս.
Յօհաննու վանքը բնակի անպաշ-
տօն միջնա զնոր տնօրէնութիւն:
Բայց ասով անոր ձեռնադրածները
ձեռնադրեալ կը մնան, և ինքն ալ
ձեռնադրող մը. արդէն անպաշտօն
էր՝ երբ ձեռնադրութիւններ ըրաւ.
ոչ եկեղեցւոյ օրէնքները, ոչ վիճա-
կաւորաց իրաւասութիւնը, ոչ ալ կը-
րօնական ժողովին հրաման մ'ունէր
ձեռնադրութիւններ ընելու: Ուստի
ներուի մեզ ըսել թէ կրօն. ժողովն
այդ ազդարարութեամբ բան մ'ը-
րած չըլլար. նոր տնօրէնութիւն
մ'ալ ընելու օր չմնաց իրեն:

Գրաւոր
Հոյ Երեմ

Կը լսենք թէ Խորհման Սրբադան
իւր 48 ամիս Պատրիարքութեան մի-
ջոցին ստացած դրամաց և ըրած ծա-
խուց հաշուեցոյցը տեղեկագրով մը
վարչութեան ղրկեր է չորեքշաբ-
թի օրը, և վարչութիւնն ալ նրկա-
տողութեան տուեր է:

Կը յուսանք որ յիշեալ տեղեկա-
գիրը չուտով կը հաղորդուի մեզ 'ի հը-
րատարակութիւն, ըստ ակնկալու-
թեան գրեթէ համայն ազդայնաց,
որք այս հաշուոյ խնդրոյն մէջ ար-
դարութիւնն իմանալու կը փափաքին
անհամբերութեամբ:

Լրագրոյ 1519 թուոյն մէջ ստոյգ-
և արժանահաւատ աղբիւրէ խմանու-
թով ծանուցած էինք թէ «Օրագրոյ
մեծապատիւ և անշահատէր խմա-
գիրը՝ կնոյմէն դ. ժ. ոչ մարդու մը
փոխանորդ կանգնելով, կնոյմ վրայ
պրոպագանդութեան յանդէպ հաստատե-
լու և ամուսնէն զատելու համար իւր
փառաբանական հաղուադիւտ տա-
ղանդին բոլոր զօրութիւնը թափելով
է դատարանական խորհրդոյ առջև, և
երբոր չէ կողեր յաշնդիլ, դատաւո-
րանական խորհրդոյ անդամաց վրայ
կողմնակցութեան մէջ քերտ ելեր
է, բայց խայտառակարար, վանտուեր
է խորհրդարանէն»:

Այս իրողութիւնը որ ամենատեղե-
քէ՝ դատարանական խորհրդոյ ատ-
եանին առջև տեղի ունեցած է: Ու-
րագիր՝ իր խայտառակութիւնը ծած-
կելու և մեզ ուռն հանելու համար,
փոխանակ դատարանական խորհրդ-
ոյ կամ անոր արձանագրութեանց
դիմելու, խառն ժողովոյ արձանագ-
րութեանց կը դիմէ, և դիմանա-
պետին կողմէ դուրս յայտարարու-
թիւն մը կ'առնայ թէ խառն ժող-
ովոյ արձանագրութեանց մէջ այդպիսի
դէպքի մը դիմելութիւն չկայ:

Անշուշտ չկայ և վրնար ըլլալ ու-
րագրէտեւ դատարանական խորհրդ-
ոյ մէջ անցած դէպքերը խառն ժո-
ղովոյ արձանագրութեանց հետ գործ
չունին:

Մեք չենք ըսած թէ խառն ժո-
ղովոյ ատենանէն վաւաստել է, այլ
դատարանական խորհրդոյ ատե-
նէն. Օրագիր մեզ տու հանելու հա-
մար՝ պէտք էր դատարանական
խորհրդոյ կողմէն վաւերական յայ-
տարարութիւն մը ձեռք բերել և
զայն հրատարակել: Իսկ խառն ժո-
ղովոյ արձանագրութիւնն ինչպէս ը-
սինք՝ բնաւ գործ չունի այս իրողու-
թեան հետ: Հետեւաբար Օրագիր
վերադառնալ իր խայտառակէ գինքն այդ
հրատարակութեամբ. որովհետեւ իր
ամուսնական դատելու փառաբան
ըլլան ատով հաստատուելէ դատ,
չատերու կապած կուտայ թէ դու-
ցէ խառն ժողովէն ալ վաւաստած է,
բայց իրեն շնորհ մ'ըլլալու համար
ժողովին ատենագրութեան մէջ ար-
ձանագրուած չէ:

Ասկայն դատարանական խոր-
հրդոյ ատենանէն վաւաստած ըլլան
անժախելի իրողութիւն մ'է, որ խառն
ժողովոյ արձանագրութեամբ չկրնար
երբէք հերքուիլ. ինչպէս՝ օրինակի
համար՝ երբոր մէկը տէրութեան մէկ
դատարանէն պարտականութեան վը-
ճիւտ ստանայ, և իր դատախազն այլոց
ստիճակ սուս հանելու համար երթայ,
ուրիշ դատարանի մ'արձանագրու-
թիւններէն վկայութիւն հանել տայ
թէ դատարարութեան վճիւտ ըս-
տացած չէ:

Կը հարցնենք ամենողջամիտ մար-
դոյ թէ Օրագրոյ ըսած հրաշալիաւ
խայտառակութիւնն եթէ այս չէ, ու-
րիշ ինչ կրնայ ըլլալ:

ՕՐԱԳՐՈՅ ԾԱՐՁԱԿԱՆ
ԵՐԿՏՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ

Բարեկամ,
Երեսփոխանական ժողովոյն մէջ
ընտնենք կը խօսին թէ լեզուները:
Բանիւ բերանոյ խօսողները մի-
այն կարող, իսկ չխօսողներն անկա-
րող երեսփոխաններ են թաղութիւն
էք, թէ վերահիշէ՛նք

Մեծնական հանգստութիւնն ա-
թուներուն վրայ փնտռելու կէտին
դալով, ատոր ձեզի չափ փորձառու
չենք

Գէմ առ գէմ՝ փառաբանել
կուզէք եղեր:

Մեր այս ըրածն ալ ընդ կրունին
փառաբանել չէ կարծեմ:

Հերիք է որ մեր անհրաժեշտ
ձեր ԱՆԱՄՈՒԹԻՒՆԸ հաստատած
ըլլայ Ա. Թ. Այգեհան

ԲԱՆԱՂՈՒԹԻՒՆ

Դպրոցական հին սովորութիւն
մ'եղած է՝ մեր լեզուին ֆեթականու-
թիւնն ուսանելու հոգ չտարուած
տաղեր և կարծեցեալ բանաստեղ-
ծութիւններ գրել:

Եթէ դատարաններն հասկնային
թէ օրքան անօգուտ է՝ մանաւանդ
ֆետակար՝ աշակերտներն զբաղեցը-
նել երկար ժամերով բառերը թըր-
թատելու և նոյնպէս բառեր ի-
րարու ներքեւ շարելու՝ անշուշտ պի-
տի հոգ ասնէին մատաղ ուղիղները
նախ իմաստասիրելու վարժեցունել,
կամ գէթ օգտակար ծանօթութիւն-
ներով անուցանել:

Իմաստասիրութիւնն արդարեւ
չառ կը պակսի Հայ գլուխներուն մէջ.
այս պակասութիւնն ալ այնպէս կե-
րելի մեզ որ դպրոցներու հիմնադ-
րին և վարժապետաց ուսանան անկա-
տարութեան առաջ եկած բան մ'է:
Մեր աղքը, ըսել կուզենք վարչու-
թիւնը, հարուստներն և թաղային
հասարակութիւնները, հաւաքական
շանքի անկարող գտնուելով՝ մինչև
հիմայ չեն յաջողած դպրոցներուն
հաստատ բարեկարգութիւն մը տալ
և փոխանակ բանաստեղծներու՝ այն-
պիսի մարդիկ հապնել որոնք իրենց
անձին, իրենց բնասիրէն և ընկե-
րութեան միանգամայն օգտակար
կարենան ըլլալ:

Այս մասին մեր անտարբերու-
թիւնն անարգարանալի է, և պէտք
է գիտնանք որ առանց մեծ շոր-
ժում մ'ընելու դէպ 'ի բարեկրու-
թիւն և մեր ընկերական վիճակին, պի-
տի դայ օր մը, և թերեւ հեռու ալ
չէ, որ ծանրապէս տուժենք մեր
անհոգութիւնը:

Այս խորհրդածութիւնն բնիւն Ե-
տեւ գանք մեր բուն ընկերին:

Վերը նկարագրած վիճակնուն
մէջ՝ ո՛ր որ դպրոց մը կ'դառնուի քիչ
չառ զարգացած, հոն փոյթ մը կ'ուս-
նուի նաև աշակերտաց դրութիւն-
ներն՝ իւր երախայրէք անոնց յառա-
ւաճադիմութեան՝ հրատարակել լը-
րագրաց մէջ, գրութիւններ, որք
ըստ մեծի մասին ոտանաւոր կըլլան:

Այդ հրատարակութիւնները, դի-
տենք, մէկ կողմէն կը խրատուեն
աշակերտները, միւս կողմանէ ալ՝
մինչդեռ դատարան կը պարծի՝ ծը-
նողք ալ քիչ մը կը հպարտանան:
Բայց այդ աշխատութիւններն տ-
շակերտներուն մտաց ծնունդն են,
կամ թէ դատարաններուն համոզումը
անբասիր կրնայ ըլլալ այդ դուռածք-
ներուն հարադատութեան վրայ, նե-
րելի է տարակուսիլ:

Բանի որ մեր պարզել ուզած
կէտն ալ այդ է, բանասիրներուն ու-
շաղթութիւնը կը հրաւիրենք հետա-
դայ ոտանաւորներուն վրայ:

ՄԻԱՅՆՈՒԹԻՒՆ
(Վարդապետ Էջ 311)

ՊԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԱՆՄԻՒԹԱՐ
(Հայերէս Էջ 191, 1874 թ. 46)

Ո՛հ ես պանդուխտ մի եմ և օտար,
Ո՛հ ես եմ պանդուխտ մի եմ օտար
Եւ ոչ զոք ունիմ,
Եւ ոչ զոք ունիմ:
Ո՛հ հարցանող ո՛չ միսթար,
Ո՛հ կարեկից ո՛չ միսթար.
Այրի՛մ և այրի՛մ:
Այրի՛մ ու այրի՛մ:

Եթէ ես լամ՝ իմ հեծութեանց
Թէ որքա՛ն լամ իմ հեծութեանց
Իցէ՛ որ լող.
Ձից՝ որ լող,
Եւ հէգ սրտիս այս բարախմանց
Այս վրաբերուս իմ անձկարեաց
Ո՛հ է ըզգացող
Ձիք որ զգացող:

Ես օտարայն ուրախութեան
Ես օտարաց մէջ խնդութեան
Մասն ինչ ոչ ունիմ,
Գէթ մաս մը չունիմ
Ամենայն ձայն հանդիսական
Ամեն նուազ դեղեկամայն
Մո՛ւգ է սո՛ւգ վասն իմ:
Սուգ է սուգ վասն իմ

Եթէ երբեք յաչս իմ պայծառ
Եթէ երկինք յաչս իմ նուազ
Շողջողայ մի յոյս,
Շողջող իւր լոյս,
Անդէն զնա առնու խաւար
Անդ՝ իմ ցաւոց նորոգի տալ
Տիրութեանց 'ի յոյգ,
Տիրութեանց 'ի յոյգ:

Հեռաքրքիր եղողները կրնան տես-
նել Գեր. Խորէն եպիսկոպոսի վարդե-
նիքին էջ 311, Միայնակ մակագրով
սպեալ 'ի Թեոդորոս 1863, և Հայրենիք
լրագրոյ 191 թիւ, 16 մարտ 1874, Պա-
րոնիս անգլիէք մակագրով և Չապէլ
Յ. Խանճեան ստորագրութեամբ ոտա-
նաւորները: Մեծ առաւելով անողերը
Խորէն եպիսկոպոսին են. իսկ մանր
առաւելով անողերն աշակերտուհայն:

Արգեօք համանուն ներշնչու-
թեան մը արդիւնք են այս երկու
իրարու նման ոտանաւորները. այդ-
պէս հաւատալ միամտութիւն է. մի-
այն պէտք է հաւատալ որ դատա-
ստաններն ալ, աշակերտներուն
չափ դրանենդ կրնան ըլլալ:

Տղու մը հետեւողութիւնն այնքան
ծիծաղելի չէ երբ կը տեսնենք երու-
սագէմի Սիւն ամաթթթթթ 1868
հոկտ. 31 թուոյն մէջ Յ. Ս. Կեօմարիկ
ճեան ստորագրութեամբ բանագող
մ'ալ, որ Խորէն եպիսկոպոսի յօրինած
և Թեոդորոս Մասեաց Աղաւնոյ 1861
յուլի 13 թուոյն մէջ տպուած 'ի Գե-
րեգման պանդուխտ Հայոց 80 տող տաղեր-
գութիւնը գրելով բառ առ բառ օ-
րինակած է:

Կը թողունք մտածել թէ ո՛րքան
Արտիստեր ու Արիւստեր ալ կողպալը-
ւած են արդեօք մինչև հիմայ, և կը
հարցնենք թէ պէտք չէ՞ զգուշանալ
ժամանակին ինքնակոյ բանաստեղծ-
ներէն, քերականներէն և հետաոր-
ներէն. և թէ իրաւունք չունինք երբ
կընենք որ՝ իմաստասիրութիւնը
պէտք է քերթողութեան առաջ մըտ-
ցընել Հայոց գլուխներուն մէջ:

* * *

Տիրութի Մեղու Հայաստանի լը-
րագրին Մեծ. Խմբագիրն հետեւալը
ըրկած է մեզ 'ի հրատարակութիւն:

* Միմէ չկան ինքնիքնին հպարտան
և հոյացէտ անուանող բայց իրք չա-
յերէն լեզուն ըստ բառական չղկացող
չաճամով վարժապետներ, որք հմուտ հա-
յոցիտաց գործերը տղկաբար պլայ-
լելով՝ կամ անոնց մէկէն ու միւսէն գող-
նալով՝ անպիտան քերականութիւններ
կարկոտած և ազդային վարժարանաց մէջ
մոյուցած են իրեն դատաղիքը:

